ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 104 Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ՝ ԵՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներով

Ա Վ Ա Գ Ա Ն Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է

1.Հաստատել 28-ը նոյեմբերի 2025թ. յոթերորդ նստաշրջանի հերթական՝ երրորդ նիստի օրակարգը հետևյալ հարցերով.

2.2026 թվականի ընթացքում Եղեգիս համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու մասին,

3.Եղեգիս համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օրը սահմանելու մասին,

4.Եղեգիս համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 2-ի թիվ 10Լ որոշման 3-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի 2025-2026 թ.թ. համայնքային սոցիալական ծրագիրը հաստատելու մասին,

6.Աստղիկ Արմենի Գրիգորյանի սեփական գյուղատնտեսական նշանակության հողատեսքերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

7.Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին,

8.Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա ծրագիրը հաստատելու մասին,

9.Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարների կիրառման կարգը հաստատելու մասին,

10.27-ը հունվարի 2025 թվականի «Եղեգիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 02Ն որոշմամբ հաստատված բյուջեում վերաբաշխում կատարելու մասին,

11.Եղեգիս համայնքի ավագանու մի շարք որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին,
12.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2,00526 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին,
13.Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 2,14849 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողատեսքերն աճուրդային կարգով օտարելու մասին:
14.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 105 Ա

2026 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի, 84-րդ հոդվածի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի 2026թ-ի բյուջեում հատկացնել գումար՝ 2026թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով, որը պետք է կազմի պետական ֆինանսավորման մասնաբաժնի առնվազն 20 (քսան) տոկոսը:

2.Սահմանել, որ՝

1) մասնակցային բյուջետավարման գործընթացի իրականացման համար կիրառելի են բյուջետային օրենսդրությամբ սահմանված բոլոր գործառնական ոլորտները՝ համայնքի կազմի մեջ մտնող բոլոր բնակավայրերի համար,

2) մասնակցային բյուջետավարման գործընթացի նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է համայնքի ղեկավարը:

3.Սույն որոշման 1-ին կետում սահմանված գործընթացը, որպես ծրագրային բաղադրիչ, ներառել համայնքի 2026 թվականի տարեկան աշխատանքային պլանում, բյուջեում և 2026թ. միջնաժամկետ ծախսային ծրագրում՝ համայնքի բնակիչների կողմից քվերակության արդյունքում ընտրված առաջարկը (ները) ներկայացնելով ավագանու հավանությանը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 106 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի պահանջով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Եղեգիս համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի չորրորդ նիստի գումարման օր սահմանել 2025 թվականի դեկտեմբերի 19-ին, ժամը 14:00-ին:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 107 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 10Լ ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Ուժը կորցրած ճանաչել Եղեգիս համայնքի ավագանու 02/02/2024թ. «Եղեգիս համայնքի ավագանու 24/10/2019 թվականի թիվ 72Ն և 08/12/2022թ. թիվ 136Ա որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և Եղեգիս համայնքի կամավոր խնդիրների լուծման և սոցիալական աջակցության տրամադրման չափորոշիչները սահմանելու մասին» թիվ 10Լ որոշման 3-րդ կետը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱՁԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 108 Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ 2025-2026 Թ.Թ.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2025-2026 թվականների համայնքային սոցիալական ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱՁԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագնու
2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 108-Լ որոշման



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ **ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ**

2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ 3

ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Շատին գյուղ 4

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Աղնջաձոր գյուղ 5

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Վարդահովիտ գյուղ 5

Վայոց ձորի մարզ Եղեգիս համայնք Հերմոն գյուղ 6

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Գողթանիկ գյուղ 6

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ 7

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Արտաբույնք գյուղ 7

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Հորս գյուղ 8

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ 8

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ 9

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Հորբատեղ գյուղ 10

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ 10

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐԸ 11

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ և ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ 13

IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ 15

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ 17

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 17

VI. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ 17

VII. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ (ԱՆՁՆԱԳԻՐ) 18

1. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1՝ բնաիրային աջակցության տրամադրում 18

2. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2՝ ուսման վարձավճարների հատուցում 22

3. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 3՝ բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ 24

4. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 4՝ բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում 27

7. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 7՝ հուղարկավորության ծախսերի հատուցում 30

VIII. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ՀԱՏՈՒՑՄԱՆ) ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ....33
IX. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ....34
X. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ) ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ....34
XI. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ....35
XII. ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ....36
XIII. ՁԵՎԱԹՂԹԵՐ....38

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ծրագրով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում իրականացվող սոցիալական ծրագրերը, մասնավորապես՝ հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում հայտնված ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու կարգավորումները, աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովելու համար համայնքի ղեկավարի կողմից մշտական գործող հանձնաժողով ստեղծելու պայմանները և գործունեության ընթացակարգը, աջակցություն ստանալու համար դիմած անձի (ընտանիքի) կարիքների գնահատման չափորոշիչները և դրանց համապատասխան միավորները, սոցիալական աջակցություն տրամադրելու մասին դիմումի ձևը, ընտանիքի կարիքների գնահատման թերթիկի ձևը:

Ծրագիրը մշակվել է «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (14.11.2024 թ. ՀՕ-414-Ն օրենք) 12-րդ հոդվածի պահանջների համաձայն և ուղղված է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածով համայնքի ղեկավարին վերապահված լիազորությունների իրականացմանը:

I. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Համայնքը ընդգրկում է 479,634 ք/կմ տարածք: Եղեգիս համայնքը ծովի մակարդակից բարձր է 1640-1690մ:

Խոշորացված համայնքի կենտրոնը Շատին գյուղն է, համայնքում 01.07.2025թ. դրությամբ բնակվում են 6452 բնակիչներ՝ 3131 իգական և 3321 արական: Տնտեսությունների թիվը՝ 1833:

Համայնքի տարածքով են հոսում Եղեգիս և Աղնջաձոր գետակները, որոնք համարվում են Արփա գետի վտակները: Եղեգիս համայնքով է անցնում «Հերմոն-Ելփին» ոռոգման ջրագիծը, որի շնորհիվ հնարավոր է ոռոգելի դարձնել համայնքի շուրջ 300 հեկտար տարածք: Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ՝ շինարարական քար՝գրանիտ, տրավերտին:

Կլիման մերձարևադարձային է, ձմեռը՝ ցուրտ, ամառը՝ շոգ: Իր բնական, աշխարհագրական դիրքով, պատմական ժառանգությամբ Եղեգիս համայնքը Հայաստանի ամենահարուստ համայնքն է և ունի զբոսաշրջության, ձիարշավի, էկոտուրիզմի, լեռնային հեծանվավազքի, վրանային ճամբարների, ձմեռային սպորտաձևերի համար լավագույն պայմաններ և հնարավորություններ:

ՀՀ Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Շատին գյուղ

Շատին գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 131կմ է, մարզկենտրոնից՝ 12կմ:

Գյուղն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում եմ համայնքում գտնվող վանքերն ու մատուռները: Գյուղի տարածքում են գտնվում երբեմնի Եղեգիս քաղաքի ավերակները, Աղվանք և Բազելիկ եկեղեցիները, Շատիվանք վանական համալիրը, Ավարայրի ճակատամարտից նահանջած հայրենասեր մարտիկների գերեզմանները, որոնք նահանջի ճանապարհին մարտի են բռնվել պարսիկների հետ: Այդ փաստն են վկայում Անգեղի, Սուրբ Աստվածածին և գյուղի այլ տարածքներում գտնվող մատուռները:

Վայոց ձորի մարզի նշանավոր հուշարձաններից է Շատիվանքը: Եղեգիս գետի և ժայռերի մեջտեղում է տեղակայված Շատին գյուղը: Շատիվանքը գտնվում է գյուղից մոտ 4 կմ արևելք, համանուն ձորակի աջ ափին, բարձրադիր գոգավորության մեջ:

Այն ունի գեղեցիկ դիրք: Արևելյան կողմից գյուղի վրա կախված են ժայռակազմ լեռների բազմասյուն ճակատները: Գյուղի տարածքը ձգվում է Եղեգիս գետի երկայնքով, նրա երեք վտակների հատման տեղում:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ:

Գյուղի տարածքում կան հանքային հանածոներ, շինարարական քար՝ գրանիտ, տրավերտին: Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1300-1350մ.:

Շատին գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 1826 բնակիչ, որից՝ 902 իգական, 924 արական, տնտեսությունների թիվը՝ 508:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Աղնջաձոր գյուղ

Աղնջաձոր գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 141կմ է, մարզկենտրոնից՝ 23կմ: Ծովի մակարդակից միջին բարձրությունը 1620 մ է:

Աղնջաձոր գյուղը գտնվում է պատմական Հայաստանի Սյունաց աշխարհի Վայոց ձոր գավառում, այն համարվում է Վայոց ձորի հյուսիսային դարպասը: Նախկինում գյուղը ունեցել է Ենգիչա, Դրունք, Աղքյանդ, Լեռնանցք անվանումները: Գյուղը վերանվանվել է Աղնջաձոր 1968 թվականին: Սահմանակից է Թառաթումբ, Քարագլուխ գյուղերին և Գեղարքունիքի մարզին:

Գյուղում է գտնվում Օրբելիների (Սելիմի) քարավանատունը, որը 1332 թվականի կառույց է, Հայաստանի միջնադարյան քաղաքացիական ճարտարապետության եզակի կառույցներից մեկը: Գյուղից երեք կիլոմետր դեպի հյուսիս՝ Սելիմից հոսող գետակի ձախ կողմի վրա կա մի կիսավեր քարավանատուն (Փոքր քարավանատուն), ենթադրվում է, որ այն կառուցվել է 13-րդ դարում:

Աղնջաձորից 4 կմ հյուսիս գտնվում է Կապույտ (Սուլեմա) բերդի ավերակները (IV-XIV դարեր), որը դասվել է Սյունյաց երկրի նշանավոր և անառիկ բերդերի շարքին: Գյուղը հարուստ է խաչքարերով (IX-XIV դարեր) և կամուրջներով (XIII-XV դարեր, XVIII-XIX դարեր):

Աղնջաձոր գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 457բնակիչ, որից՝ 211 իգական, 246 արական, տնտեսությունների թիվը՝ 115:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Վարդահովիտ գյուղ

Վարդահովիտ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 152կմ է, մարզկենտրոնից՝ 34կմ, ծովի մակարդակից 2050 մ բարձրության վրա, ընդգրկված է Հայաստանի Հանրապետության բարձր լեռնային գյուղերի ցանկում: Գյուղի մեջ ընդգրկված են նաև Սևաժայռ և Գետիկվանք գյուղատեղիները:

Գյուղի վարչական տարածքից են սկիզբ առնում Եղեգիս գետի Սևաժայռ (Կարակայա) և Էլեգիս վտակները: Գյուղը գտնվելով անտառամերձ գոտում ունի շատ գեղեցիկ բնապատկեր: Գետիկվանքը նախկինում եղել է Գետիկ ամրոց, այժմ այնտեղ պահպանվել են Հին Գետիկ եկեղեցու (12-17-րդ դար) մասունքները և գերեզմանոցը:

Գյուղի վարչական տարածքում առկա է բնական տաք և թթու ջրերի ակունքներ:

Գյուղի բնակիչները, բնակլիմայական պայմաններից ելնելով, զբաղվում են գյուղատնտեսական աշխատանքներով և անասնապահությամբ: Գյուղի տարածքում գործում են ՓՀԷԿ-եր, որտեղ աշխատում են համայնքից մոտ 40-50 բնակիչներ:

Վարդահովիտ գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 262 բնակիչ, որից՝ 121 իգական, 141 արական, տնտեսությունների թիվը՝ 79:

Վայոց ձորի մարզ Եղեգիս համայնք Հերմոն գյուղ

Հերմոն գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 146կմ է, մարզկենտրոնից՝ 26կմ:

Գյուղը վերաբնակեցվել է 1988թ-ից, բնակիչները հիմնականում նախկին փախստականներ են եղել գաղթած Ադրբեջանից:

Հերմոնը հիմնականում ապահովված է խմելու ջրով, Հերմոնից է հոսում Եղեգիս գետի վտակները:

Գյուղի տարածքում են Հերմոն և Արատես վանքերը 13-րդ դարում կառուցված, համայնքի տարածքում գործում են 1 խանութ, 4 ՓՀԷԿ, «Սիրանուշ» ճամբարը և 1 հանգստյան տուն:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1750մ բարձրության վրա:

Հերմոն գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 230 բնակիչ, որից՝ 120իգական. 110 արական, տնտեսությունների թիվը՝ 63:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Գողթանիկ գյուղ

Գողթանիկ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 151կմ է, մարզկենտրոնից՝ 30կմ, Եղեգիս գետի ձախ ափին՝ հյուսիսարևելյան մասում:

Գյուղը հյուսիսարևելքից սահմանակից է Կարմրաշեն գյուղին, հարավարևելքից սահմանակից է Վարդահովիտ գյուղին, իսկ հարավարևմուտքից սահմանակից է Հերմոն գյուղին:

Գյուղը նախկինում անվանվել է «Ղաբախլու» իսկ 90-ական թվականներից գյուղը վերանվանվել է «Գողթանիկ»: Գյուղը վերանվանվել է այն պատճառով, որ բնակչության 80%ը գաղթվել է Նախիջևանի Ինքնավար Հանրապետության Գողթան գավառի /Օրդուբադի շրջան/ տարածքից: Գյուղում կան մի քանի խաչքարեր և քանդված եկեղեցի:

Գյուղի վերևում բարձր գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղերին:

Գյուղը գտվում է ծովի մակերևույթից 1850մ բարձրության վրա:

Գողթանիկ գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 163 բնակիչ, որից՝ 72 իգական, 91 արական, տնտեսությունների թիվը՝ 67:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Եղեգիս գյուղ

Եղեգիս գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 140կմ է, մարզկենտրոնից՝ 20կմ, Եղեգիս գետի աջ ափին հարավային մասում: Գյուղը հյուսիսարևելքից սահմանակից է Հերմոն գյուղին, հարավարևելքից Արտաբույնք գյուղին, իսկ հարավարևմուտքից սահմանակից է Շատին գյուղին: Գյուղը նախկինում կոչվել է «Ալայազ», իսկ 2000- ական թվականներից գյուղը վերանվանվել է «Եղեգիս»: Վերանվանվել է այն պատճառով, որովհետև գտնվում է պատմական Եղեգիս քաղաքի տարածքում: Գյուղը հարուստ է եկեղեցիներով ու խաչքարերով՝ Եղեգիսի հյուսիսարևմտյան մասում գտնվում են Եղեգիս բերդի ավերակները (Սմբատաբերդ, IX դար), արևելյան մասում՝ Սբ. Ստեփանոս (Զորաց) (XIII դար), արևմտյան մասում՝ Սբ. Աստվածածին (վերանորոգված 1703 թ.), հարավային մասում՝ Սբ. Նշան (Կարապետ) (XI-XIII դարեր) եկեղեցին, XI-XVI դարերի խաչքարեր:

Գյուղի վերևում բարձր գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում գյուղերին: Գյուղն ունի շատ գեղեցիկ աշխարհագրական դիրք, որը հնարավորություն է տալիս զարգացնել տուրիզմը:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1580մ բարձրության վրա:

Եղեգիս գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 388 բնակիչ, որից՝ 183 իգական, 205 արական, տնտեսությունների թիվը՝ 120:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Արտաբույնք գյուղ

Արտաբույնք գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 137կմ է, մարզկենտրոնից՝ 18կմ:

Գյուղի միջով հոսում է Եղեգիս գետի Էլեգիս վտակը:

Գյուղի արևելյան կողմում բարձրանում է հսկա լեռնային պատնեշը, որի վրա գտնվում է Սմբատաբերդ ամրոցը, որը կառուցվել է 12-րդ դարում: Բերդը կոչվել է Սյունյաց տան իշխան Սմբատի անունով: Սմբատաբերդից հյուսիս-արևմուտք գտնվում է Ցաղացքար եկեղեցական համալիրը / Եկեղեցին կառուցել է Բագրատունյաց թագավորության շրջանում

984-1029 թթ. կառավարման շրջանում: Կա շրջակայքում ևս 2 եկեղեցիներ ավելի վաղ թվագրությամբ: Գլխավոր եկեղեցին Սբ.Կարապետ եկեղեցին/:

Գյուղի տնտեսության գլխավոր ճյուղը գյուղատնտեսությունն է: Հիմնականում զբաղվում են հողագործությամբ և անասնապահությամբ:

Գյուղը գտնվում է ծովի մակերևույթից 1650մ բարձրության վրա:

Արտաբույնք գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 1054 բնակիչ, որից՝ 520 իգական, 534 արական, տնտեսությունների թիվը՝ 359:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Հորս գյուղ

Հորս գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 139կմ է, մարզկենտրոնից՝ 20կմ:

Հորսում է գտնվում 13-րդ դարում կառուցված Չեսարի իշխանի առ անձնատունը, որը անվանում են «Չեսարի դարպասներ», իսկ Վարդենյանց լեռնանցքում գտնվող իջևանատունը եղել է նույն Չեսարի իշխանի քարավանատունը: Հորս գյուղում է գտնվում նաև իշխանական գերեզմանատունը:

Գյուղից 4կմ վերև 2016թ. Բեզուար ՎԲ ՀԿ միջոցներով կառուցվել է տուրիստական տուն, այժմ տուրիստներ են գալիս տարբեր երկրներից:

Հորս գյուղն ունի շատ տեսարժան վայրեր: Հորսի լիճը գտնվում է գյուղից 4կմ վերև, Բութ մատ կոչվող լեռնաշղթայի ստորոտում, որից անմիջապես հետո սկսվում է Հորսի անտառը:

Բնակչությունը զբաղվում է անասնապահությամբ, մեղվապահությամբ և գյուղատնտեսությամբ: Անասնապահության հիմնական ճյուղը խոշոր եղջերավոր անասնապահությունն է, իսկ գյուղատնտեսությանը՝ . խաղողը, ընկույզը, պտուղը և բանջարեղենը: Գյուղը ծովի մակերևույթից բարձր է 1550մ, իսկ Գնդասար լեռը բարձր է 2900մ:

Հորս գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 240 բնակիչ, որից՝ 116 իգական, 124 արական, տնտեսությունների թիվը՝ 79:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Թառաթումբ գյուղ

Թառաթումբ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 142կմ է, մարզկենտրոնից՝ 23կմ, Վարդենիսի լեռնաշղթայի հարավային լանջերին:

Գյուղը սահմանակից է Հորս, Սալլի, Քարագլուխ, Աղնջաձոր գյուղերին, արևմուտքից սահմանակից է Գեղարքունիքի մարզին:

Բնակչությունը զբաղվում է այգեգործությամբ, հիմնականում խնձոր և ընկույզ, կարտոֆիլի մշակությամբ, մեղվաբուծությամբ և անասնապահությամբ:

Թառաթումբում կան X-XII դարի խաչքարեր: Գյուղն ունի գործող եկեղեցի, որը կառուցվել է 1896 թվականին:

Գյուղը ծովի մակերևույթից բարձր է 1640մ:

Թառաթումբ գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 487 բնակիչ, որից՝ 225 իգական, 262 արական, տնտեսությունների թիվը՝ 140:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Քարագլուխ գյուղ

Քարագլուխ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, հեռավորությունը Երևանից 138կմ է, մարզկենտրոնից՝ 21կմ, զբաղեցնում է 22,7կմ քառ. տարածք: Գյուղը սահմանակից է Սալլի, Աղնջաձոր, Թառաթումբ գյուղերին և Գեղարքունիքի մարզին:

Գյուղի կլիմայական պայմանները փոփոխվում են ըստ ռելիեֆի և դրա բնակելի տարածքների համար արտահայտված են հետևյալ տիպերով՝ չոր ցամաքային չափավոր ցուրտ ձմեռ և տաք ամառ, բարեխառն՝ երկարատև տաք ամառով և ցուրտ ձմեռով:

Գյուղում և շրջակայքում պահպանվել են 14-րդ դարի սբ. Աստվածածին փայտածածկ եկեղեցին, 12-13-րդ դարերի «Քարագլուխ» կամ «Շիկաքար» բերդը, որն ունի 12-րդ դարի երկու եկեղեցիներ, մեկը կանգուն է, մյուսը՝ փլված, 1253 թվականի թվագրությամբ տապանաքարով, 12-13-րդ դարերի մահարձաններով և 13-րդ դարի խաչքարերով հարուստ հին գերեզմանոցը, Հասան-Ջալալյան իշխանի 13-րդ դարի դղյակ-դիտարանը, աղբյուր-հուշարձանները: Քարագլուխ գյուղում է գտնվում Թուխ Մանուկ վանքը: Վանական համալիրի ավերակներն ու շուրջ բոլորը տարածված գերեզմանոցում պահպանված հուշարձանները (քառակող կոթող, խաչքարեր, տապանաքարեր) վկայում են, որ հնավայրը

գոյություն է ունեցել առնվազն վաղ միջնադարից և իր նշանակությանը ծառայել մինչև շահաբասյան բռնագաղթը:

Քարագլուխ գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 835 բնակիչ, որից՝ 410 իգական, 425 արական, տնտեսությունների թիվը՝ 188:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Հորբատեղ գյուղ

Հորբատեղ գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, մարզկենտրոնից հեռու է 21կմ, մայրաքաղաքից 141կմ:

Գյուղից վերև բարձրաբերձ գագաթներով սարեր են, որոնց լանջերից բխող աղբյուրները խմելու և ոռոգման ջուր են մատակարարում Վայոց ձորի մարզի մյուս գյուղերին: Գյուղը սահմանակից է Արտաբույնք, Եղեգիս, Սալլի գյուղերի հետ:

Գյուղը գտնվում է մարզկենտրոնից հյուսիս, Վարդենիսի լեռների հարավային փեշերին, Արտաբուն գետի ափին, այնտեղ է գտնվում «Հորբատեղի գեյզերը» այն բնական գազով ջուր է, որը բխում է գետնի տակից և շրջապատված է քարերով: Այն գրավել է տուրիստական կազմակերպությունների ուշադրությունը, որի շնորհիվ իրենց տուր. փաթեթներում ներառվել են նաև «Հորբատեղի գեյզեր» այցելությունը: Գեյզերի առկայությունը նպաստել է համայնքում զբոսաշրջիկների մեծաքանակ հոսքին:

Ծովի մակարդակից բարձր է 1880 մ:

Գյուղում է Հորբատեղ գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 262 բնակիչ, որից՝ 121 իգական, 141 արական, տնտեսությունների թիվը՝ 50:

Վայոց ձորի մարզ, Եղեգիս համայնք, Սալլի գյուղ

Սալլի գյուղը գտնվում է ՀՀ Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքում, ծովի մակարդակից 1600մ միջին բարձրության վրա: Հողատարածքները գտնվում են ծովի մակերևույթից 1400-2850մ սահմաններում:

Գյուղը մարզկենտրոնից հեռու է 15կմ, մայրաքաղաքից 137կմ:

Սալլի գյուղը գոյություն է ունեցել շատ հնուց: Այդ մասին կա հիշատակություն Ստեփան Օրբելյանի «Պատմություն Սիսական» գրքում, որում հիշատակվում է, որ Գրիգոր

Լուսավորչի հանձնարարությամբ քարոզիչներ են ուղարկվում Հայաստանի տարբեր վայրեր, որոնք իրենց հետ վերցնում են սրբերի մասունքներ և քարոզում են քրիստոնեություն: Հիշատակվում է, որ նրանք իջևանում են Սալլի գյուղի տարածքում և այդ սրբերից մեկի՝ Սուրբ Մամասի մասունքները հանգրվանում են Սալլի գյուղում և այնտեղ կառուցվում է փոքր եկեղեցի, որը ներկա պահին ենթակա է վերակառուցման:

Սալլի գյուղում 01/07/2025թ. դրությամբ փաստացի հաշվառված են 248 բնակիչ, որից՝ 130 իգական, 118 արական, տնտեսությունների թիվը՝ 66:

II. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՈՐՈՇ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Աղյուսակ 1

	Տվյալը (տվյալները ձեռքբերելու անհնարինության դեպքում կարող է նշվել «Տվյալներ չկան»)	01.01.2025թ. ժամանակահատվածի դրությամբ	...ժամանակահատվածի դրությամբ	...ժամանակահատվածի դրությամբ
1	**Մշտական բնակչության թիվ, որից՝**	6452		
1.1	Արական	3321		
1.2	Իգական	3131		
1.3	**Որից մինչև 18 տարեկան, որից՝**	1419		
1.3.1	Արական	724		
1.3.2	Իգական	695		
1.4	**Որից 65-75 տարեկաններ, որից՝**	641		
1.4.1	Արական	308		
1.4.2	Իգական	333		
1.5	**Որից 75-ից բարձր, որից՝**	231		
1.5.1	Արական	98		
1.5.2	Իգական	133		

Աղյուսակ 2

	Տվյալը	01.01.2025թ ժամանակահատվածի դրությամբ		
		2025		

2	Տնային տնտեսությունների թիվ	2436		
3	Երեխաների թիվ	1419		
4	Գործազուրկներ, որից՝	118		
4.1	Կանայք	50		
4.2	Աշխատաշուկայում անմրցունակ աշխատանք փնտրողներ, ընդամենը, որից՝	118		
4.2.1	Կանայք	50		
5	Աշխատանք փնտրող անձանց թիվը, որից՝	18		
5.1	Կանայք	6		
6	Հաշմանդամություն ունեցող անձանց թիվը	131		
7	Հաշվառված հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը	5		
8	Ընտանիքի անապահովության գնահատման համակարգում 28.01 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների թիվը	130		
9	Բազմազավակ ընտանիքների թիվը /4 և ավելի երեխա ունեցող ընտանիքների թիվ/	36		
10	Միայնակ բնակվող տարեցների թիվը	44		
11*	Անժառանգ տարեցների թիվը	40		
12	Միածնող ընտանիքների թիվը /ՄՍԾ-ում գրանցված ծնողներից մեկին կորցրած ընտանիքները/	4		
13	Զարգացման առանձնահատկություններ ունեցող երեխաների թիվը			
14	Տեղահանված, փախստական կամ ապաստան հայցող անձանց կամ ընտանիքների թիվը	19ընտանիք		
15	Կրթությունեից դուրս մնացած երեխաների թիվը	1		
16	Կենսաթոշակառուների թիվը	1165		
17	Ընտանեկան կամ կենցաղային բռնության դեպքեր	Տվյալներ չկան		
18	Հրատապ արձագանք պահանջող իրավիճակներից (այդ թվում՝ արտակարգ կամ ռազմական) տուժած անձանց կամ ընտանիքների թիվ	200ընտանիք		
20	Հոգեկան կամ մտավոր առողջության խնդիր ունեցող անձանց թիվը ընդամենը, որից՝	Տվյալներ չկան		
20.1	Երեխաներ	1419		

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԸ ԵՎ ԱՅԼ ՏՎՅԱԼՆԵՐ

Անվանում	Քանակ	Նկարագրություն(եթե առկա է)
ՆՈՒՀ-երի թիվը		
ԲԿ-ների թիվը		
ԱԱՊ և ամբուլատորիա	1	
Մշակույթի/Արվեստի դպրոցների թիվը	1	
Սպորտդպրոցների թիվը	1	
Արտադպրոցական կրթական հաստատությունների թիվը		
Սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ների թիվը		
Համայնքի բալանսում առկա չօգտագործվող շինությունների թիվը	0	
Սոցիալական բնակարանների թիվը	0	
Համայնքում ԲՈՒՀ-երի թիվը	0	
Այլ		

Այլ տվյալներ

1. Տրանսպորտային հաղորդակցություն	
Տրանսպորտային կապը մարզկենտրոնի հետ (Երևանի դեպքում չի լրացվում)՝	Տրանսպորտային կապը Եղեգիսի և մյուս բնակավայրերի միջև ապահովվում է մասնավոր կազմակերպությունների կողմից և գործում է կանոնավոր կերպով: Վարչական կենտրոնի և բնակավայրերի միջև հեռավորությունը 1-20 կմ է:
Տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ՝ (Երևանի դեպքում չի լրացվում)՝	Ծառայությունը մատուցվում է մասնավոր կազմակերպությունների կողմից: Հեռավորությունը մայրաքաղաքից 130 կմ է:
Ներհամայնքային տրանսպորտ՝	Համայնքային տրանսպորտ առկա չէ: Տրանսպորտային կապը Եղեգիսի և մյուս բնակավայրերի միջև ապահովվում է մասնավոր կազմակերպությունների կողմից և գործում է կանոնավոր կերպով:

Տրանսպորտային կապը հարևան համայնքի հետ՝	Տրանսպորտային կապն առկա է մարզկենտրոնի հետ:
2. Տնտեսական ներուժը	
Համայնքում սոցիալական պատասխանատվություն ցուցաբերած մասնավոր կազմակերպություններ	
Համայնքում խոշոր հարկատուների առկայություն՝	
Այլ	
3. Սոցիալական աջակցության պետական կառույցները համայնքում	
Համայնքում պետական դրամաշնորհով սոցիալական ծառայություններ	2 («Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն, Կարմիր Խաչ)
Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող պետական հաստատություններ (ՄՍԾ ՏԿ, ՊՈԱԿ, այլ)	2 (ՄՍԾՏԿ, Կարմիր Խաչ)
Սոցիալական ծառայություններ տրամադրող համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների առկայությունը և տրամադրվող ծառայությունները	
Այլ	
4. Սոցիալական աջակցության ոլորտի ՔՀԿ-ներ	
Համայնքում սոցիալական ուղղվածությամբ ՀԿ-ներ	
Համայնքում սոցիալական խմբերի ներկայացուցիչների ոչ ֆորմալ նախաձեռնություն՝	
Սոցիալական տարբեր խմբերի շահերը պաշտպանող ՔՀԿ-ներ	2
Միջազգային դոնոր կազմակերպությունների ներկայացուցչություններ	1
իրավապաշտպան, տեղեկատվական թեժ-գծեր	1

կամ վստահության հեռախոսահամարներ	
Համայնքում բարեգործական հիմնադրամներ	
Այլ	
5. Սոցիալական ծառայությունների էկոհամակարգը համայնքում	
Համայնքում սոցիալական ծառայություններ մատուցող մասնավոր կազմակերպություններ	0
Համայնքում սոցիալական ծառայությունների մատուցող ՔՀԿ-ներ	8 («Սյունիք զարգացում» ՀԿ, Առաքելություն Հայաստան, ACTED, ՀԲԸՄ, ՄԱԿ, «Մարդը կարիքի մեջ» ՀԿ, Կարմիր Խաչ, «Դու մենակ չես» կանանց աջակցման կենտրոն)
Այլ	
Սոցիալական ծառայությունների նախորդ տարիների փորձառությունը *(ներկայացնել վերջին երեք տարվա ընթացքում համայնքում սոցիալական ծառայություններ տրամադրած կազմակերպությունների տվյալները և տրամադրած ծառայությունները, որոնց գործունեությունը տվյալ պահին դադարեցված է կամ ավարտված, նշել նաև դադարեցման պատճառները և շարունակականությունն ապահովելու նպատակահարմարությունը)*	

IV. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԿՐԹԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐՈՒԺԸ

Ոլորտը	Մասնագետներ	Տվյալներ, (եթե առկա են)

Սոցիալական	1. Սոցիալական աշխատողներ	1
	2. Սոցիալական մանկավարժ	0
	3. Սոցիալական սատարողներ և սոցիալական սպասարկման այլ մասնագետներ	0
Հոգեբանական	4. հոգեբան	0
	5. մանկական հոգեբան	0
	6. հոգեթերապևտ	0
Բժշկական	7. Վերականգնողաբան	0
	8. Նյարդաբան	0
	9. Հոգեբույժ	0
	10. այլ (նշել)	0
Իրավական	11. Փաստաբաններ	0
	12. Իրավաբաններ	1
	13. Իրավախորհրդատու	
Կրթական-մասնագիտական	Կրթական ծրագրերով զբաղվող մասնագետներ, կարիերայի կենտրոններ, մասնագիտական կողմնորոշման մասնագետներ և այլ(քոլեջներ և ՄՄԾ)	0
Հարբժշկական		0
	Կինեզիոլոգ	0
	Էրգոթերապիստ	0
	Օրթեզիստ	0
	Պրոթեզիստ	0
	Լոգոպեդ	0
	Հատուկ մանկավարժ	0
	Սուրդոմանկավարժ	0
	Տիֆլոմանկավարժ	0
	Արտ-թերապիստ	0
	Խաղաթերապիստ	0
	Դիաբետի դպրոցի մասնագետ	0

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ և ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

SWOT ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

S- Ուժեղ կողմեր	*W- Թույլ կողմեր*
• Բնական և պատմամշակութային հարուստ ռեսուրսներ և միջնադարյան հայտնի պատմամշակութային կոթողներ • Գինու, պանրի (հատկապես այծի պանիր), չրի պահածոների արտադրության ամբողջական արտադրական շղթաների առկայություն • Հայաստանի առաջատար զբոսաշրջային կլաստերների կենտրոն • Հասարակական մի քանի կազմակերպությունների ակտիվ գործունեություն	• Գործազրկության բարձր մակարդակ • Որակյալ կադրերի արտահոսք • Տարբեր ենթակառուցվածքների թերի վիճակ • Կրթական կենտրոնների բացակայություն • Մշակութային ժամանցային կենտրոնների բացակայություն
O - Հնարավորություններ	**T- Սպառնալիքներ**
• Բնական և պատմամշակութային հարուստ ժառանգություն • Տարածաշրջանում գինեգործության, զբոսաշրջության զարգացման բարձր տեմպե • Համագործակցություն հանրապետական կամ միջազգային նշանակության ՀԿ-ների և կառույցների հետ	• Ադրբեջանական ագրեսիայի ռիսկ • Բնակչության, հատկապես երիտասարդների արտագաղթ • Ծնելիության ցածր մակարդակ • Պետական և համաշխարհային մակարդակներում անկայուն իրավիճակ

VI. ՏԵՍԼԱԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը, համայնքում ծնելիության և բազմազավակության խթանումը: Ապահովել խոցելի ընտանիքների բնակիչների բարեկեցիկ կյանքը համայնքային սոցիալական աշխատանքի խթանման միջոցով, խոցելի ընտանիքների տնտեսական դիմակայունության բարձրացման (գյուղական բնակավայրերում

անասնապահություն, ջերմոցային տնտեսությունների ստեղծում, մասնագիտական կարողությունների զարգացում), հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի հնարավորության և սոցիալ-հոգեբանական ծառայությունների ընդլայնման, հատուկ կարիքներով մեծահասակների ցերեկային խնամքի ծառայությունների ստեղծման միջոցով և այլն:

Պետության պաշտպանության իրականացման աջակցումը, աղետների ռիսկերի նվազեցման և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ու քաղաքացիական պաշտպանության միջոցառումների կազմակերպումը և իրականացումը.

Համայնքի առաջնային խնդիրներից են անվտանգությունը, քաղաքացիական պաշտպանությունը, աղետների ռիսկերի կառավարումը:

Նախատեսվում է՝

Բարձրացնել քաղաքացիական պաշտպանության արդյունավետությունը և ապահովել բնակչության լիարժեք պատսպարումը, կառուցել նոր ապաստարաններ:

Բարեգործության խթանումը համայնքում մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, մարզական, սոցիալական և այլ հաստատությունների հիմնադրման, ֆինանսավորման, ինչպես նաև դրանց ֆինանսական անկախության ապահովման նպատակով:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Ստորև՝ ենթածրագրերի միջոցով, ներկայացվում է համայնքային սոցիալական ծրագրի նպատակների իրականացմանն ուղղված առաջարկներ, որոնց նպատակն է լուծել բնակչության սոցիալական պաշտպանության խնդիրը Եղեգիս համայնքում:

VII. ԵՆԹԱԾՐԱԳՐԵՐԸ (ԱՆՁՆԱԳԻՐ)

1. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 1՝ բնաիրային աջակցության տրամադրում

Անվանումը՝ *բնաիրային աջակցության տրամադրում*	
Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն
Ծրագրի անմիջական նպատակը	***Բնաիրային աջակցության տրամադրում՝ դրամական հատուցմամբ, դեղորայքի, սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի, կենցաղային անհրաժեշտ այլ իրերի ձեռքբերման համար:***
Ծրագրի հիմնական արդյունքները	Դիմումատու ընտանիքներ, ովքեր հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում և չեն կարող սեփական ուժերով հաղթահարել այդ

<table>
<tr><td></td><td>իրավիճակը, կստանան բնաիրային աջակցություն՝ համաձայն կարիքի գնահատման արդյունքների:</td></tr>
<tr><td></td><td>
<table>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="2">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026</td></tr>
<tr><td>100</td><td>100</td><td>100</td></tr>
</table>
</td></tr>
<tr><td rowspan="2">Ծրագրի միջանկյալ արդյունքները</td><td>Այն ընտանիքները, ովքեր հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում և չեն կարող սեփական ուժերով հաղթահարել այդ իրավիճակը, կստանան բնաիրային աջակցություն՝ համաձայն կարիքի գնահատման արդյունքների:</td></tr>
<tr><td>
<table>
<tr><td rowspan="3"></td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026 /1-ին կիսամյակ/</td><td>2026 /2-րդ կիսամյակ/</td></tr>
<tr><td>100</td><td>100</td><td>50</td><td>50</td></tr>
<tr><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
</table>
</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td>
1. Ֆինանսական հատուցումները իրականացվելու են համայնքային բյուջեի «Նպաստներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին,
2. մատակարարումներ իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հրապարակային օֆերտայի հիման վրա, նախապես կնքված պայմանագրերին համապատասխան:
3. ձեռքբերումների ցանկը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից որոշված և ավագանու կողմից հաստատված հատուցման տեսակին,
4. համայնքապետարանի կողմից տրամադրված հատուցման չափը չպետք է գերազանցի Հանձնաժողովի կողմից հաստատված
</td></tr>
</table>

	հատուցման ենթակա գումարի չափին, 5. ձեռքբերված ապրանքների դիմաց վճարումները համայնքապետարանն իրականացնում է ծառայություն մատուցած կամ մատակարար կազմակերպություններին՝ իրենց կողմից կոնկրետ անձի մասով ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա: 6. կազմակերպություններին տրամադրված դրամական հատուցումները կարող են լինել դրանց կողմից մատուցված ծառայությունների կամ տրամադրված ապրանքների դիմաց ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով կատարված դրամական փոխանցումների միջոցով:
Ծրագրի բյուջեն	Յուրաքանչյուր տարվա համար 2000000 /երկու միլիոն/ ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	-
Ծրագրի հիմնական ռիսկերը	Ծրագրի համար նախատեսված բյուջեն կարող է չբավականացնել բնակիչների կողմից ներկայացվող դիմումներին:
Ծրագրի հիմնական շահառուները	Հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված տեղացի և տեղահնված ընտանիքներ, ընտանիքի անդամներ
Ծրագրի սկիզբը և ավարտը	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Բնաիրային հատուցման չափը սահմանել առավելագույնը **40000 (քառասուն հազար)** ՀՀ դրամ: ***Բնաիրային աջակցության տրամադրում՝ դրամական հատուցմամբ, դեղորայքի, սննդի, հիգիենայի պարագաների, հագուստի, կոշիկի, կենցաղային անհրաժեշտ այլ իրերի ձեռքբերման համար:***

Ֆինանսավորման սխեմա՝ ենթածրագիր 1

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր				Ֆինանսավորման պակաս	Նշումներ
		Տեղական բյուջե	Պետական, ռեգիոնալ բյուջեներ	Ձեռնարկություններ	Դոնորներ		
Դիմումի ուսումնասիրություն, կարիքի գնահատում	0	-	-	-	-	-	-
Հանձնաժողովի որոշման կայացման փուլ	0	-	-	-	-	-	-
Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում	0	-	-	-	-	-	-

Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 1

Գործողություններ / նախագծերի գաղափարներ	Տևողություն (սկիզբ / ավարտ)	Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ	Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ	Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ
Բնաիրային աջակցության տրամադրում՝ դրամական հատուցմամբ,	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30	2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը

2. **ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 2՝** ուսման վարձավճարների հատուցում

<table>
<tr><td colspan="6">Անվանումը՝ ուսման վարձավճարների հատուցում</td></tr>
<tr><td>Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը</td><td colspan="5">Բնակչության սոցիալական պաշտպանություն</td></tr>
<tr><td>Ծրագրի անմիջական նպատակը</td><td colspan="5">Ուսման վարձավճարների հատուցում՝ ուսումնական հաստատություններին համապատասխան հիմքերի և փաստաթղթերի, անդորրագրերի ներկայացման դեպքում և Հանձնաժողովի հատուկ եզրակացության հիման վրա:</td></tr>
<tr><td rowspan="4">Ծրագրի հիմնական արդյունքները</td><td colspan="5">Վարձավճարների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքներ</td></tr>
<tr><td rowspan="3">Շահառուների թիվ</td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td colspan="2">2026</td></tr>
<tr><td>10</td><td>10</td><td colspan="2">10</td></tr>
<tr><td rowspan="5">Ծրագրի միջանկյալ արդյունքները</td><td colspan="5">Վարձավճարների հատուցումից օգտված, հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված տվյալ ժամանակահատվածի ընթացքի համար դիմում ներկայացրած ընտանիքներ</td></tr>
<tr><td rowspan="3"></td><td>Ելակետային արժեք</td><td colspan="3">Թիրախային արժեքներ (ըստ տարիների)</td></tr>
<tr><td>2025</td><td>2025</td><td>2026 /1-ին կիսամյակ/</td><td>2026 /2-րդ կիսամյակ/</td></tr>
<tr><td>10</td><td>10</td><td>5</td><td>5</td></tr>
<tr><td>Ծրագրի հիմնական գործողությունները</td><td colspan="5">Ուսման վարձավճարների հատուցում, այն ընտանիքների անդամների համար, որոնք հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում:</td></tr>
<tr><td>Ծրագրի բյուջեն</td><td colspan="5">Յուրաքանչյուր տարվա համար՝ 1000000 / մեկ միլիոն / ՀՀ դրամ</td></tr>
</table>

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	–
Ծրագրի հիմնական ռիսկերը	**Պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից օգտվելու մասին փաստերի մասին համապատասխան տեղեկատվության ձեռքեբերումը**
Ծրագրի հիմնական շահառուները	**3-րդ կամ 4-րդ կուրսում գտնվող միջինից բարձր առաջադիմություն ունեցող այն ուսանողները, որոնց ընտանիքներ ընտանիքներրը հայտնվել է հրատապ արձագանք պահանջող կյանքի դժվարին իրավիճակում: Ընտանիքը կարող է օգտվել ուսման վարձավճարի հատուցումից, եթե չի օգտվում պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից:**
Ծրագրի սկիզբը և ավարտը	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30
Ծրագրի համառոտ նկարագրությունը	**Ուսման վարձավճարի հատուցման չափը սահմանել առավելագույնը 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ: Ուսման վարձավճարների հատուցում, որից կարող են օգտվել 3-րդ կամ 4-րդ կուրսում գտնվող միջինից բարձր առաջադիմություն ունեցող այն ուսանողները, որոնց ընտանիքները հայտնվել է հրատապ արձագանք պահանջող կյանքի դժվարին իրավիճակում: Ընտանիքը կարող է օգտվել ուսման վարձավճարի հատուցումից, եթե չի օգտվում պետության կողմից սահմանված ուսման վարձի վճարման արտոնություններից:**

Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 2

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր	Ֆինանսավորման պակաս	Նշումներ

		Տեղական բյուջե	Պետական, ռեգիոնալ բյուջեներ	Ձեռնարկություններ	Դոնորներ		
Դիմումի ուսումնասիրություն, կարիքի գնահատում	0	-	-	-	-	-	-
Հանձնաժողովի որոշման կայացման փուլ	0	-	-	-	-	-	-
Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում	0	-	-	-	-	-	-

Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 2

Գործողություններ / նախագծերի գաղափարներ	Տևողություն (սկիզբ / ավարտ)	Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ	Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ	Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ
ՈՒսման վարձավճարի հատուցում	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30	2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը

3. **ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 3՝** բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ

Անվանումը՝ ***բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար***

կատարված հատուցումներ	
Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն
Ծրագրի անմիջական նպատակը	***Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ***
Ծրագրի հիմնական արդյունքները	Բժշկական ծառայություններից օգտվելու համար կատարված դրամական հատուցում այն ընտանիքներին, որոնք առողջական խնդիրների պատճառով հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում:

Շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (ըստ տարիների)	
	2025	2025	2026
	15	15	15

Ծրագրի միջանկյալ արդյունքները	**Բժշկական ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքներ**			
	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (ըստ տարիների)		
	2025	2025	2026 /1-ին կիսամյակ	2026 /2-րդ կիսամյակ
	15	15	8	7

Ծրագրի հիմնական գործողությունները	***Բժշկական ծառայություններից օգտվելու համար վճարված բժշկական ծախսերի կամ բուժհաստատություններ հասնելու համար վճարված ճանապարհածախսի համար կատարված հատուցումներ, որոնք փոխանցվելու են բժշկական ծառայություն մատուցած կազմակերպություններին՝ օրենքով պահանջվող կարգով, իսկ անհնարինության դեպքում հանձնաժողովի հատուկ եզրակացության, համապատասխան փաստաթղթերի և անդորագրերի առկայության դեպքում հատուցումը կարող է***

	տրամադրվել սույն Ծրագրի X-րդ գլխի պահանջներով սահմանված այլ եղանակով:
Ծրագրի բյուջեն	Յուրաքանչյուր տարվա համար՝ 1 500 000
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	-
Ծրագրի հիմնական ռիսկերը	Բնակիչների կողմից ներկայացվող դիմումների քանակը կարող է գերազանցել ծրագրի համար նախատեսված բյուջեին:
Ծրագրի հիմնական շահառուները	Բժշկական ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքներ, որոնք առողջական խնդիրների պատճառով հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակում:
Ծրագրի սկիզբը և ավարտը	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Կատարված հատուցումներից կարող են օգտվել այն ընտանիքները, որոնք հայտնվել են հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում և ամբողջությամբ կամ գոնե 70 տոկոսի չափով չեն օգտվում պետության կողմից սահմանված վճարման արտոնություններից: Հատուցման առավելագույն չափը սահմանվում է 100000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ՝ ըստ կարիքի:

Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 3

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր				Ֆինանսավորման պակաս	Նշումներ
		Տեղական բյուջե	Պետական, ռեգիոնալ բյուջեներ	Ձեռնարկություններ	Դոնորներ		
Դիմումի ուսումնասիրություն, կարիքի գնահատում	0	-	-	-	-	-	-
Հանձնաժող	0	-	-	-	-	-	-

ովի որոշման կայացման փուլ							
Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում	0	-	-	-	-	-	-

Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 3

Գործողություններ / նախագծերի գաղափարներ	Տևողություն (սկիզբ/ավարտ)	Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ	Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ	Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ
Բժշկական ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքների աջակցություն	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30	2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը

4. **ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 4՝** բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում

Անվանումը՝ ***բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում***	
Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն

Ծրագրի անմիջական նպատակը	***Բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում:***				
Ծրագրի հիմնական արդյունքները	***Աշխատանքների իրականացման արդյունքում ընտանիքների անդամների կենսագործունեության անվտանգության ապահովում կամ կենսական կարևոր կարիքների բավարարում***				
	Շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (ըստ տարիների)		
		2025	2025	2026	
		10	10	10	
Ծրագրի միջանկյալ արդյունքները					
		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (ըստ տարիների)		
		2025	2025	2026 /1-ին կիսամյակ/	2026 /2-րդ կիսամյակ/
		10	10	5	5
Ծրագրի հիմնական գործողությունները	***Բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծախսերի հատուցում:***				
Ծրագրի բյուջեն	Յուրաքանչյուր տարվա համար՝ 1000000				
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	-				
Ծրագրի հիմնական ռիսկերը	-				
Ծրագրի հիմնական շահառուները	3				
Ծրագրի սկիզբը և ավարտը	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Հատուցման չափը սահմանել առավելագույնը **100000 (մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ՝ կախված կարիքից: ***Ընտանիքը գտնվում է հրատապ արձագանք պահանջող իրավիճակում և առաջացած բնակարանային խնդիրները կամ առկա պայմանները կարող են ազդել տվյալ***				

	իրավիճակում ապրող ընտանիքի անդամների կենսագործունեության անվտանգության ապահովման կամ կենսական կարևոր կարիքների բավարարման վրա:

Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 4

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր				Ֆինանսավորման պակաս	Նշումներ
		Տեղական բյուջե	Պետական, ռեգիոնալ բյուջեներ	Ձեռնարկություններ	Դոնորներ		
Դիմումի ուսումնասիրություն, կարիքի գնահատում	0	-	-	-	-	-	-
Հանձնաժողովի որոշման կայացման փուլ	0	-	-	-	-	-	-
Հատուցման տրամադրման գործընթացի ապահովում	0	-	-	-	-	-	-

Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 4

Գործողություններ / նախագծերի գաղափարներ	Տևողություն (սկիզբ / ավարտ)	Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ	Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ	Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ

Բնակարանային պայմանների բարեկարգման աշխատանքների կամ շինանյութի գնման համար կատարված ծառայությունների հատուցումից օգտված հրատապ արձագանք պահանջող իրավիճակում հայտնված ընտանիքների աջակցություն	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30	2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը

5. ԵՆԹԱԾՐԱԳԻՐ 5՝ հուղարկավորության ծախսերի հատուցում

Անվանումը՝ ***Հուղարկավորության ծախսերի հատուցում***				
Խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Բնակչության սոցիալական պաշտպանություն			
Ծրագրի անմիջական նպատակը	***Հուղարկավորության ծախսերի հատուցում այն հանգուցյալների համար, ովքեր չունեն ընտանիքի անդամներ կամ ընտանիքի անդամներն աշխատունակ չեն և ապրում են սոցիալապես անապահով պայմաններում:***			
Ծրագրի հիմնական արդյունքները	***Անաշխատունակ ընտանիքի անդամներ ունեցող կամ ընտանիքի անդամներն չունեցող սոցիալապես անապահով պայմաններում ապրող անձանց հուղարկավորության ծախսերի հատուցում***			
	Շահառուների թիվ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (ըստ տարիների)	
		2025	2025	2026
		5	5	5
Ծրագրի միջանկյալ արդյունքները	***Անաշխատունակ ընտանիքի անդամներ ունեցող կամ ընտանիքի անդամներն չունեցող սոցիալապես անապահով պայմաններում ապրող անձանց հուղարկավորության ծախսերի հատուցում***			

		Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (ըստ տարիների)		
		2025	2025	2026 /1-ին կիսամյակ/	2026 /2-րդ կիսամյակ/
		5	5	2	3
Ծրագրի հիմնական գործողությունները	***Հուղարկավորության ծախսերի հատուցում այն հանգուցյալների համար, ովքեր չունեն ընտանիքի անդամներ կամ ընտանիքի անդամներն աշխատունակ չեն և ապրում են սոցիալապես անապահով պայմաններում:***				
Ծրագրի բյուջեն	Յուրաքանչյուր տարվա համար՝ 500000 /հինգ հարյուր հազար/ ՀՀ դրամ				
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	-				
Ծրագրի հիմնական ռիսկերը	Մատուցվող ծառայությունների գների փոփոխություն				
Ծրագրի հիմնական շահառուները	***Անաշխատունակ ընտանիքի անդամներ ունեցող կամ ընտանիքի անդամներն չունեցող սոցիալապես անապահով պայմաններում ապրող ընտանիք***				
Ծրագրի սկիզբը և ավարտը	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30				
Ծրագրի համառոտ նկարագրությունը	Հուղարկավորության ծախսերի հատուցման առավելագույն չափը սահմանվում է մինչև **100000 (մեկ հարյուր հազար)** ՀՀ դրամ՝ կախված կարիքից: ***Հուղարկավորության ծախսերի հատուցում այն հանգուցյալների համար, ովքեր չունեն ընտանիքի անդամներ կամ ընտանիքի անդամներն աշխատունակ չեն և ապրում են սոցիալապես անապահով պայմաններում:***				

Ֆինանսավորման սխեմա՝ Ենթածրագիր 5

Միջոցառումներ	Գնահատված ծախսեր	Ֆինանսավորման աղբյուր				Ֆինանսավորման պակաս	Նշումներ
		Տեղա	Պետակա	Ձեռնարկու	Դոնոր		

		կան բյուջե	ն, ռեգիոնալ բյուջեներ	թյուններ	ներ		
Փաստերի ուսումնասիրություն	0	-	-	-	-	-	-
Փաստաթղթերի հավաքագրում	0	-			-	-	-
Ծառայություն մատուցող կազմակերպությունների ընտրություն օֆերտայի եղանակով	0	-	-	-	-	-	-
Հուղարկավորության ընթացքի և ավարտի ամփոփում	0	-	-	-	-	-	-

Մոնիթորինգի պլան՝ Ենթածրագիր 5

Գործողություններ / նախագծերի գաղափարներ	Տևողություն (սկիզբ / ավարտ)	Ակնկալվող արդյունքներ կարճաժամկետ	Ակնկալվող արդյունքներ միջնաժամկետ	Ակնկալվող արդյունքներ երկարաժամկետ
Հուղարկավորության ծախսերի հատուցում այն հանգուցյալների համար, ովքեր չունեն ընտանիքի անդամներ կամ ընտանիքի անդամներն աշխատունակ չեն և ապրում են սոցիալապես	2025 թվականի դեկտեմբերի 1-ից 2026 թվականի դեկտեմբերի 30	2025 թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026 թ. հուլիսի 01-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը	2026թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ ամփոփվելու է ծրագրից օգտված շահառուների թիվը և բյուջեի ծախսը

անապահով պայմաններում:				

VIII. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ (ՀԱՏՈՒՑՄԱՆ) ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Սոցիալական ծառայությունների ցանկով սահմանված բոլոր տեսակի հատուցումները (աջակցությունները) տրամադրվում են բնակչի դիմումի համաձայն՝ հիմք ընդունելով ներկայացված դիմումը, խոցելիությունը կամ հրատապ արձագանք պահանջող իրավիճակը հիմնավորող համապատասխան փաստաթղթերը, Հանձնաժողովի կողմից իրականացված կարիքի գնահատման արդյունքները, սոցիալական վիճակի մասին եզրակացությունը կամ (և) Հանձնաժողովի հատուկ եզրակացությունը:

Դիմումը (Ձև 1) ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

Դիմումին կցվում է՝

1) դիմումատուի անձը հաստատող փաստաթուղթը,
2) դիմումատուի սոցիալական քարտը կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքը,
3) հրատապ արձագանք պահանջող իրավիճակում գտնվելու հանգամանքը կամ խոցելիությունը հիմնավորող փաստաթղթեր (դժբախտ պատահար, ընտանիքի անդամի կորուստ, բնական կամ տեխնոծին աղետի պատճառած վնաս, առողջական վիճակի մասին փաստաթղթեր և այլ),
4) սույն կարգով նախատեսված սոցիալական կոնկրետ ծառայությունից օգտվելու կարիքը հիմնավորող այլ փաստաթղթեր, անդորրագրեր և այլն:

Ընտանիքի կարիքի գնահատումը կատարվում է միավորային համակարգով՝ համաձայն ձևաչաթղթի (Ձև 2): Ընտանիքը կարող է օգտվել աջակցությունից, եթե գնահատման արդյունքում ստացել է նվազագույն 5 միավոր:

IX. ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Համայնքի ղեկավարը ստեղծում է համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական ծառայություններ (հատուցում) տրամադրելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով):

Հանձնաժողովում կարող են ընդգրկվել՝

1) համայնքի ավագանու մինչև երեք անդամ,
2) համայնքապետարանի աշխատակազմի սոցիալական աշխատող (աշխատողներ),
3) համայնքապետարանի աշխատակազմից մինչև երեք աշխատող
4) Միասնական սոցիալական ծառայության Եղեգիսի տարածքային կենտրոնի համապատասխան մասնագետ կամ մասնագետներ:

Համայնքի ղեկավարը հանձնաժողովի կազմից նշանակում է նախագահ, նախագահի տեղակալ և քարտուղար: Նախագահի տեղակալը փոխարինում է նախագահին՝ նրա բացակայության ժամանակ:

Հանձնաժողովի քարտուղար է նշանակվում համայնքի սոցիալական աշխատողը:

Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպվում են տնային այցելությունների, քննարկումների միջոցով, որոնց արդյունքում կայացվում են իրավիճակային լուծումներ պահանջող որոշումներ:

Սոցիալական ծառայությունների ցանկի 5-րդ կետից օգտվելու համար ներկայացված դիմումների ուսումնասիրության գործընթացին մասնակցում է նաև տվյալ հաստատության տնօրենը:

Հանձնաժողովը որոշումը կայացնում է Հանձնաժողովի ամփոփիչ նիստի արդյունքում, որը ներկայացվում է Հանձնաժողովի նիստի արձանագրությամբ:

Համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցները, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների տնօրենները, բնակավայրերի վարչական ղեկավարները յուրաքանչյուրն իր գործառույթների շրջանակներում, անհրաժեշտության դեպքում, պարտավոր են աջակցել հանձնաժողովի աշխատանքներին:

X. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ (ՀԱՏՈՒՑՈՒՄԻՑ) ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Աջակցությունը ցուցաբերվում է Հանձնաժողովի կողմից դրական եզրակացություն ստացած ընտանիքներին:

Աջակցության (հատուցման) չափի մասին գրավոր նշվում է հանձնաժողովի եզրակացության մեջ՝ ձևաչափին համապատասխան (Ձև 3):

Հանձնաժողովի դրական եզրակացության հիման վրա համայնքի ավագանին ընդունում է որոշում աջակցության տրամադրման մասին:

Մեկ տարվա ընթացքում նույն ընտանիքը կարող է օգտվել միայն մեկ դրամական հատուցման ծրագրից:

Տարբեր գերատեչությունների կողմից տրամադրվող ծառայություններից օգտվելու հավանականությունը բացառելու համար ծրագրով սահմանված ծառայություններից օգտվում են համայնքի այն բնակիչները կամ ընտանիքները, որոնք չունեն համանման ծառայություններից օգտվելու այլ արտոնություններ կամ հնարավորություններ:

Ընտանիքը չի կարող օգտվել հատուցման ծրագրերից, եթե ունի ժամկետանց պարտավորություններ տեղական բյուջեի նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ ընտանիքը հայտնվել է հրատապ արձագանք պահանջող իրավիճակներում և այդ իրավիճակները սպառնում են ընտանիքի կամ առանձին անդամների կյանքին ու առողջությանը: Այդ մասին հատուկ եզրակացություն է ներկայացնում հանձնաժողովը՝ պարտադիր տնայցի և կարիքների գնահատման արդյունքների հիման վրա:

XI. ՀԱՏՈՒՑՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Ֆինանսական հատուցումները իրականացվելու են համայնքային բյուջեի «Նպաստներ» հոդվածով նախատեսված միջոցների հաշվին:
2. Մատակարարումներ իրականացնող կազմակերպություններն ընտրվելու են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 453-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հրապարակային օֆերտայի հիման վրա, նախապես կնքված պայմանագրերին համապատասխան:
3. Ձեռքբերումների ցանկը համապատասխանում է Հանձնաժողովի կողմից որոշված և ավագանու կողմից հաստատված հատուցման տեսակին:
4. Համայնքապետարանի կողմից տրամադրված հատուցման չափը չպետք է գերազանցի Հանձնաժողովի կողմից հաստատված հատուցման ենթակա գումարի չափին,
5. Ձեռքբերված ծառայությունների կամ ապրանքների դիմաց վճարումները համայնքապետարանն իրականացնում է ծառայություն մատուցած կամ մատակարար կազմակերպություններին՝ իրենց կողմից կոնկրետ անձի մասով ներկայացված հաշիվ-ապրանքագրերի հիման վրա:
6. Կազմակերպություններին տրամադրված դրամական հատուցումները կարող են լինել դրանց կողմից մատուցված ծառայությունների կամ տրամադրված ապրանքների դիմաց ամբողջական կամ մասնակի հատուցման նպատակով կատարված դրամական փոխանցումների միջոցով:
7. Հաշիվ-ապրանքագրերի տրամադրման անհնարինության դեպքում դրամական հատուցման համար դիմած կամ ստացած անձը հիմնավորում է հատուցման հանգամանքը

համապատասխան անդորրագրերով և փաստաթղթերով, որոնք պետք է հաստատված լինեն Հանձնաժողովի համապատասխան եզրակացությամբ:

XII. ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ԴՐԱՆՑ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ

1. Ծրագրերի մշտադիտարկումը և գնահատումն իրականացնում է Հանձնաժողովը: Մշտադիտարկման աշխատանքներին, ըստ անհրաժեշտության, կարող են ներգրավվել նաև համայնքապետարանի աշխատակազմի և ստորաբաժանումների այլ մասնագետներ:

2. Մշտադիտարկման հիմնական ցուցանիշներն են՝

1) սոցիալական արդյունավետություն՝ արդյունքը նպաստելու է համայնքային առաջնահերթ կարիքի բավարարմանը.

2) տնտեսական արդյունավետություն՝ արդյունքը նպաստելու է այնպիսի ծառայությունների ստեղծմանը կամ եղածի բարելավմանը, որոնցից ստացված սոցիալական օգուտները համապատասխանում են կատարված ծախսերին.

3) համապատասխանություն և հասցեականություն՝ արդյունքը նպատակաուղղված է սոցիալական կարիքներ ունեցող խմբերին ուղղված ծառայությունների ստեղծմանը կամ դրանց բարելավմանը.

4) համընդհանրություն՝ արդյունքը նպաստելու է ծառայությունների մատուցմանը բոլոր նրանց համար, ովքեր դրա կարիքն ունեն.

5) ժամանակատարություն՝ արդյունքը նպաստելու է ծառայությունների մատուցումն իրականացնել ողջամիտ ժամանակահատվածում.

6) մատչելիություն՝ արդյունքը նպաստելու է ծառայությունների մատուցման տնտեսական մատչելիության ավելացմանը.

7) հասանելիություն՝ արդյունքը նպաստելու է ծառայությունների մատուցման ֆիզիկական հասանելիության բարելավմանը:

3. Ծրագրերի գնահատման տարեկան արդյունքները մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն:

4. Ծրագրի իրականացման ընթացքում՝ մեկնարկից հետո առնվազն իրականացման ժամակահատվածի կեսն անցնելուց հետո, կատարվում է մշտադիտարկում և (կամ) ընթացիկ գնահատումը, որի նպատակն է պարզել, թե, արդյո՞ք, ծրագիրն իրականացվում է ըստ նախատեսվածի, կան, արդյո՞ք, շեղումներ, և ի՞նչ նոր հանգամանքներ են ի հայտ եկել, որոնք կարող են ծրագրի վերանայման պատճառ հանդիսանալ:

5. Ծրագրի վերանայման գործընթացը կատարում է ծրագիրը մշակող աշխատանքային խումբը սույն հավելվածով սահմանված կարգով՝ ուշադրություն դարձնելով բնակչության նոր կարիքներին, ռեսուրսային և տնտեսական հնարավորությունների փոփոխություններին, ճգնաժամային երևույթներին և այլն:

6. Ծրագրի վերանայման դեպքում այն ներկայացվում է համայնքի ղեկավարին, որն էլ, իր հերթին, այն ներկայացնում է համայնքի ավագանու հաստատմանը՝ որպես վերանայված ծրագիր:

7. Ծրագրի՝ սահմանված ժամկետի ավարտից հետո կատարվում է դրա վերջնական գնահատում՝ որոշելու ծրագրում ընդգրկված անձանց վրա ծրագրի ունեցած ազդեցության աստիճանը՝ համեմատելով դրանով առաջադրված նպատակների ու համեմատելով դրանով առաջադրված նպատակների ու խնդիրների հետ:

8. Համայնքների բնակչության գնահատված սոցիալական կարիքների ընդհանրական պատկերը կազմելու նպատակով համայնքները մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի 1-ը Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն են ներկայացնում նախորդ տարվա ընթացքում հաստատված Ծրագրերի, ներառյալ՝ ենթածրագրերի պատճենները, ինչպես նաև տեղեկատվություն դրանցից յուրաքանչյուրի ուղղությամբ համայնքների ղեկավարների կողմից ձեռնարկված միջոցառումների և արդյունքների մասին:

VII. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓԱԹԵԹԸ

Յուրաքանչյուր դեպքը (դիմումը) դիտարկվում է որպես առանձին գործ (սոցիալական գործ), որի մեջ ներառվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) դիմումը
2) դիմողի անձը հաստատող փաստաթղթերի պատճենները,
3) ընտանիքի և (կամ) նրա անդամի (անդամների) խոցելիությունը հավաստող անհրաժեշտ փաստաթղթերի պատճենները,
4) ընտանիքի կարիքների գնահատման թերթիկը (Ձև 2), որը լրացվում և ստորագրվում է հանձնաժողովի տունայց կատարած անդամների կողմից.
5) սոցիալական աշխատողի եզրակացությունը կամ Հանձնաժողովի հատուկ եզրակացությունը.

Հանձնաժողովի քարտուղարը քննարկման ներկայացված դեպքերը (յուրաքանչյուր նիստի կտրվածքով) ամբողջականացնում է մեկ ընդհանուր փաթեթում և ապահովում փաստաթղթերի փաթեթի ամբողջականությունը և պահպանվածությունը՝ համաձայն գործավարության կարգի:

Ընդհանուր փաթեթում ներառվում է նաև աջակցություն ցուցաբերելու մասին համայնքի ավագանու որոշումը և աջակցությունը տրամադրելու փաստը հավաստող փաստաթուղթ:

Աջակցություն տրամադրելու փաստաթղթերի ամբողջական փաթեթում ներառվում է նաև Հանձնաժողովի ամփոփիչ նիստի արձանագրությունը:

Գործերը համարակալվում են արաբական թվերով: Գործերի համարակալումը յուրաքանչյուր տարի վերսկսվում է: Ավարտված գործի էջերը համարակալվում են, գործերը կարվում են և կնքվում համայնքի աշխատակազմի կնիքով:

Համայնքապետարանի աշխատակազմի կողմից վարած սոցիալական աջակցության վերաբերյալ գործերը պահպանվում են նաև էլեկտրոնային եղանակով:

XIII. ՁԵՎԱԹՂԹԵՐ

Ձև 1
Դիմումի ձև

ՀՀ.....մարզի

.....համայնքի

ղեկավար.....ին

Հասցե.....

.....բնակիչ

Անուն, ազգանուն.....

.....ից

Հեռախոս.....

Էլ. փոստ.....

Դ Ի Մ ՈՒ Մ

Սոցիալական աջակցություն տրամադրելու մասին

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ես կամ ընտանիքիս անդամները հայտնվել ենք կյանքի դժվարին իրավիճակում, ունեմ (ունենք) սոցիալական աջակցության կարիք .....

.....

(նշել հիմնական և առաջնահերթ կարիքները, որոնց բավարարման համար դիմում եք աջակցության)

կարիքները բավարարելու կամ .....

.....

.....

(նշել այն հիմնական ծառայությունները, որոնց կարիքն առկա է հիմնական և առաջնահերթ կարիքները բավարարելու համար, օրինակ՝ բժշկական օգնության, դեղորայքի, հագուստի, սննդի, փոխադրամիջոցի հատկացման, այլ)

ծառայություններից օգտվելու համար:

Ներկայացվող փաստաթղթերի ցանկ՝

№	**Փաստաթղթի անվանումը**	**Կցված է** (կատարվում է✓ նշում)
1.	Դիմում՝ լրացված սահմանված ձևով	
2.	Անձը հավաստող փաստաթղթի պատճենը	
3.	Սոցիալական քարտի կամ հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին տեղեկանքի պատճենը	
4.	Տեղեկանք բնակության վայրից՝ ընտանիքի կազմի մասին	
5.	Հաշմանդամության վկայականի կամ բժշկասոցիալական փորձաքննական որոշման պատճենը	
6.	Բժշկական հաստատությունից տեղեկանք հիվանդության մասին կամ ամբուլատոր քարտից քաղվածք	
7.	Սոցիալական անապահով վիճակը հիմնավորող փաստաթղթի պատճենը՝ տրված սոցիալական ապահովության մարմնի կողմից	
8.	Այլ	

Ստորագրելով այս դիմումը՝ չեմ առարկում և տալիս եմ համաձայնություն իմ կողմից հայցվող ծառայությունը ստանալու նպատակով համայնքապետարանի աշխատակազմում իմ անձնական տվյալների մշակման և օգտագործման, ինչպես նաև համայնքապետարանի աշխատողների կողմից տնային կամ գտնվելու վայրում այցելություն կատարելու համար:

Ես տեղյակ եմ «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված իրավունքների մասին:

Ցանկանում եմ ծառայության տրամադրման հետ կապված փաստաթղթերը և/կամ ծանուցումները ստանալ

□էլեկտրոնային փոստի միջոցով

□ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով

□պատվիրված նամակով ուղարկելու միջոցով

Դիմող՝ ---------- ----------

(ստորագրություն) (դիմումատուի անուն, ազգանուն)

----- ---------- 20-- թ.

Ձև 2

ԸՆՏԱՆԻՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԹԵՐԹԻԿ

Հայաստանի Հանրապետության _____ մարզի _____ համայնք

«---»----------20----թ.

Ընդհանուր տվյալներ

Դիմողի անուն, ազգանուն, հայրանուն ----------

Հասցե ----------

Հեռախոս ----------

Ընտանիքի ժողովրդագրական տվյալները

Անուն, ազգանուն, հայրանուն	Կարգավիճակ	Ծննդյան օր, ամիս, տարի

Ընտանիքի իրավիճակը

Իրավիճակ	Նկարագիր
Բնակարանային պայմաններ	
Կոմունալ-կենցաղային և սանիտարա- հիգիենիկ պայմաններ	
Աշխատանքով ապահովվածություն	
Եկամուտներ	
Հագուստով ապահովվածություն	
Սննդով ապահովվածություն	
Առողջապահական կարիքներ	
Այլ	

Լրացուցիչ տեղեկատվություն

Մասնագետի դիտարկումներ

Ընտանիքի կարիքների գնահատման սանդղակ

	Չափորոշիչը	Չափորոշիչի համար սահմանված միավորը	Ընտանիքի ստացած միավորը
1	Նպաստառու ընտանիք	1	
2	Միայնակ ծնողի/խնամակալի ընտանիք, որի խնամքի տակ կա առնվազն մեկ երեխա	2	
3	Երկկողմանի ծնողազուրկ երեխա ունեցող ընտանիք (յուրաքանչյուր երեխայի համար)	1	
4	Բազմազավակ (չորս և ավելի երեխա ունեցող) ընտանիք	1	
5	Պարտադիր ժամկետային զինծառայող ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)	1	
6	1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող անձ ունեցող ընտանիք (յուրաքանչյուրին)	2	
7	Վարձով կամ ոչ հիմնական շինությունում կամ 3-րդ կամ 4-րդ կարգի վթարային ճանաչված շենքում բնակվող ընտանիք	2	
8	Արտակարգ իրավիճակից տուժած ընտանիք	3	
9	Դիմելու օրվան նախորդող երեք ամսվա ընթացքում ընտանիքի անդամի մահվան դեպք	2	
10	Հայրենիքի պաշտպանության ժամանակ զոհված (անհետ կորած) կամ հաշմանդամություն ստացած անձի ընտանիք	2	
11	Միայնակ չաշխատող թոշակառու	2	
12	Հղի կին ունեցող ընտանիք	1	
13	Ընտանիքի անդամի մոտ առողջության վատթարացմամբ պայմանավորված իրավիճակ, որի պատճառով անհրաժեշտություն է առաջացել բժշկական անհետաձգելի միջամտության	2	

14	Այլ անբարենպաստ պայմաններ (նշել կոնկրետ իրավիճակը)	1	
	ԸՆԴԱՄԵՆԸ		

Աշխատանքային խմբի կամ հանձնաժողովի անդամների ստորագրությունները

Ձև 3

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ 20__ ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՉԱՓՆ՝ ԸՍՏ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ

ՀՀ	Ազգանուն, անուն	Բնակավայր	Հասցե	Գումարի չափ
1				
2				
3				
4				
5				
6				
7				
8				
9				
10				

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 109 Ա

ԱՍՏՂԻԿ ԱՐՄԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով,

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Աստղիկ Արմենի Գրիգորյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության խոտհարք հողատեսքը (0,28543հա մակերեսով, 10-035-0231-0078 կադաստրային ծածկագրով) փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ չրանոց կառուցելու համար:

2.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Շատին գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Շատին գյուղի վարչական տարածքում գտնվող քաղաքացի Աստղիկ Արմենի Գրիգորյանի սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության այլ հողատեսքը (0,1479հա մակերեսով, 10-035-0231-0082 կադաստրային ծածկագրով) փոխել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր, գործառնական նշանակությունը գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ սառնարանային տնտեսություն կառուցելու համար:

Կողմ -10 Դեմ -0 Ձեռնպահ -1

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 110 Ա

ԹԱՌԱԹՈՒՄԲ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2021թ. հունիսի 17-ի «Գյուղատնտեսական նշանակության հողերը ոչ գյուղատնտեսական նշանակության հողերի փոխադրման դեպքերը սահմանելու մասին» 987-Ն որոշման 1-ին մասի 14-րդ կետը, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2011թ. դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) գլխավոր հատակագծերի, համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի և բնակավայրերի տարածքների գոտևորման նախագծերի մշակման, փորձաքննության, համաձայնեցման, հաստատման և փոփոխման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մայիսի 2-ի N 609-ն, 2010 թվականի մարտի 4-ի N 208-ն ու Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի մայիսի 14-ի N 408 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 1920-Ն որոշման պահանջները

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Եղեգիս համայնքի Թառաթումբ գյուղի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում նախատեսվող փոփոխությանը, ըստ որի նախատեսվում է՝ Թառաթումբ գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված հողերի նպատակային նշանակությունը փոխադրել Էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր նպատակային նշանակության, գործառնական նշանակությունը էներգետիկայի.

1)0,1հա մակերեսով, 10-024-0104-0011 կադաստրային ծածկագրով այլ հողատեսք,

2)0,01հա մակերեսով, 10-024-0995-0002 կադաստրային ծածկագրով արոտավայր,

3)0,01հա մակերեսով, 10-024-0995-0003 կադաստրային ծածկագրով արոտավայր,

4)0,01հա մակերեսով, 10-024-0995-0004 կադաստրային ծածկագրով արոտավայր:

2.Համայնքի ղեկավարին՝ կազմել և «Հայաստանի Հանրապետության համայնքների (բնակավայրերի) քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով»-ի համաձայնեցմանը ներկայացնել համապատասխան հողաշինական գործը:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 111 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 11)-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա ծրագիրը՝ համաձայն սույն որոշման կից հավելվածի:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության
Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի ավագնու
2025 թվականի նոյեմբերի 28-ի թիվ 111 Ա որոշման

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԵՆՔԵՐԻ ՈՒ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ

Համայնքի գույքի կառավարում

Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի, շինությունների

Հ/h	Գույքի անվանումը	Հասցեն կամ ծածկագիրը	Զբաղեցրած տարածքը/մակերեսը (մ²)	Վիճակի գնահատումը	Գույքի կառավարման գործառույթը	Այլ բնութագրիչներ
1.	Վարչական շենք	Թառաթումբ 2 փողոց շենք 6	200ք/մ	լավ	համայնքային	2011թ.
2.	Մշակույթի տուն	Թառաթումբ 2 փողոց շենք 6	170ք/մ	բավարար	համայնքային	2011թ.
3.	վարչական շենք	Աղնջաձոր 1փող1/1	316ք/մ	վատ	համայնքային	1969թ.
4.	վագոն տնակ	Աղնջաձոր 1փող1/1	33,3ք/մ	վատ	համայնքային	1998թ.
5.	մշակույթի տուն	Աղնջաձոր 3փող1/1	192,8ք/մ	լավ	համայնքային	1985թ.
6.	բնակելի տուն	Աղնջաձոր 7փող 1փկղ	334,3ք/մ	լավ	համայնքային	1988թ.
7.	բնակելի տուն	Աղնջաձոր 7փող 1փկղ	322,2ք/մ	լավ	համայնքային	1988թ.
8.	Վարչական շենք	Հերմոն Սիրանեսի փ 31	82,5ք/մ	բավարար	համայնքային	1972թ.
9.	Վարչական շենք	Վարդահովիտ, փողոց 2, թիվ 5	96 ք/մ	բավարար	համայնքային	1954թ.
10.	Վարչական շենք /դպրոց/	Վարդահովիտ, փողոց 7, թիվ 4	400 ք/մ	բավարար	համայնքային	1974թ.
11.	Խանութի շենք	Վարդահովիտ, փողոց 2, թիվ 4	201,29 ք/մ	անբավարար	համայնքային	1971թ.
12.	Մշակույթի տուն	Վարդահովիտ, փողոց 8, թիվ 11/1	300 ք/մ	լավ	համայնքային	1974թ.
13.	Վարչական շենք	Եղեգիս,3փ.շենք1	165 ք/մ	բավարար	համայնքաին	1980թ.
14.	Մշակույթի տուն	Եղեգիս,3.փշենք.1	180ք/մ	բավարար	համայնքաին	1980թ.
15.	Վարչական շենք	Քարագլուխ Փող.7 շենք 6	150ք/մ	վատ	համայնքային	1980թ.

16.	Մանկապարտեզի շենք	Քարագլուխ Փող.5 շենք 7	1602,25ք/մ	լավ	համայնքային	1985թ.
17.	Մշակույթի տուն	Քարագլուխ Փող.3 շենք 6	364ք/մ	վատ	համայնքային	1953թ.
18.	Վարչական շենք	Գ. Հորս 2փ թիվ 4	574 ք/մ	բավարար	համայնքային	1973թ.
19.	Վարչական շենք	Արտաբույնք 11 փ. 1փկղ.2 շենք	182 ք/մ	լավ	համայնքային	1984թ.
20.	Մշակույթի տուն	Արտաբույնք 1 փողոց 4 շենք	680 ք/մ	լավ	համայնքային	1962թ.
21.	Վարչական շենք	Սալլի փողոց 1, փակուղի 1, թիվ4	140ք/մ	բավարար	համայնքային	
22.	Վարչական շենք	Հորբատեղ Կենտրոնական 16	140ք/մ	բավարար	համայնքային	1979թ.
23.	Մշակույթի տուն	Հորբատեղ Կենտրոնական 16	140ք/մ	բավարար	համայնքային	1979թ.
24.	Վարչական շենք	Շատին փողոց 1 շենք 1	120ք/մ	վատ	համայնքային	1965թ.
25.	Մշակույթի տուն	Շատին փողոց 1 շենք1	120ք/մ	վատ	համայնքային	1965թ.
26.	Վարչական շենք	Գողթանիկ 4-րդ փողոց շենք 2	299.6 ք/մ	լավ	համայնքային	1970թ.
27.	Մշակույթի տուն	Գողթանիկ 4-րդ փողոց շենք 2	903.78 ք/մ	բավարար	համայնքային	1970թ.
28.	Մանկապարտեզի շենք	Գողթանիկ 4-րդ փողոց շենք 2		լավ	համայնքային	1970թ.

Եղեգիս համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Ահարոն Գաբրիելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 112 Լ

ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 7-րդ մասով և «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Հաստատել Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարների կիրառման կարգը՝ համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ -8	Դեմ -3	Ձեռնպահ -0
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ	ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ	
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ	ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ	
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ	ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ	
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ		
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ		
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ		
ՆԱՁԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ		
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ		

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Հավելված
Եղեգիս համայնքի ավագանու
2025թ. նոյեմբերի 28-ի թիվ 112-Լ որոշման

ԿԱՐԳ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների զբաղեցրած պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճանի համար և համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարների կիրառման կարգը:
2. Հավելավճարը սահմանվում է «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով այն համայնքային ծառայողների համար, ովքեր ստացել են համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան և կիրառվում է ավելի բարձր դասային աստիճանը շնորհելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:
3. Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմում համայնքային ծառայության տվյալ պաշտոնի ենթախմբին համապատասխանող դասային աստիճանից բարձր դասային աստիճան ունենալու համար հավելավճարի տրամադրման դեպքում համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացում (**ավագանու որոշմամբ**) ավելի բարձր դասային աստիճանի համար, շնորհված նաև այլ համայնքների աշխատակազմերում:
4. Համայնքային ծառայության բնագավառում աշխատակազմի համայնքային ծառայողների ունեցած երկար տարիների (առնվազն հինգ տարի) աշխատանքային ստաժի համար հավելավճարը տրվում է ունեցած երկար տարիների աշխատանքային ստաժի համար:
5. Համայնքային ծառայության բնագավառում երկար տարիների աշխատանքային ստաժի համար հավելավճարը համայնքային ծառայողի պաշտոնային դրույքաչափի նկատմամբ կիրառվում է տոկոսային ավելացմամբ՝ **ավագանու որոշմամբ** և կիրառվում է սահմանված աշխատանքային ստաժը լրանալու ամսվան հաջորդող ամսվա մեկից:
6. Եղեգիսի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայողների պաշտոնային դրույքաչափի նկատմամբ սահմանվող հավելավճարները յուրաքանչյուր ամիս վճարվում է աշխատավարձի հետ միասին՝ ընդհանուր գումարով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա" ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 113 Ն

27-Ը ՀՈՒՆՎԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 2Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջին տեղակալի առաջարկությունը

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Հաստատել Եղեգիս համայնքի 27 հունվարի 2025 թվականի «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգիս համայնքի 2025 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին» թիվ 2Ն որոշման մեջ կատարվող հետևյալ վերաբաշխումը.

1)Պակասեցնել՝

Համայնքի բյուջեի գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 4237- ներկայացուցչական ծախսեր հոդվածից 500,0 հազար (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

ավելացնել՝

ա.Գործառնական դասակարգման բաժին 01 խումբ 01 դաս 01 օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4241- մասնագիտական ծառայություններ հոդվածին 500,0 հազար (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱԶԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 114 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1)-ին կետի և 3-րդ մասի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 21-ի «Եղեգիս համայնքի Գողթանիկ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 40Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «տասը տարի ժամկետով» բառերով,

բ)«բացառապես ծառատունկ իրականացնելու նպատակով» բառերը փոխարինել «ծառատունկի, կեսաբազմազանության պահպանության, որսագողության կանխարգելման և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու նպատակով» բառերով,

գ)կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

2.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 21-ի «Եղեգիս համայնքի Վարդահովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 41Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «տասը տարի ժամկետով» բառերով,

բ)«բացառապես ծառատունկ իրականացնելու նպատակով» բառերը փոխարինել «ծառատունկի, կեսաբազմազանության պահպանության, որսագողության

կանխարգելման և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու նպատակով» բառերով,

գ)կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

3.Եղեգիս համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 21-ի «Եղեգիս համայնքի Հորս գյուղի վարչական սահմաններում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատեսքերից «Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամ»-ին անհատույց (մշտական) բնապահպանական նպատակներով օգտագործման տրամադրելուն համաձայնություն տալու մասին» թիվ 42Ա որոշման մեջ՝

ա)«(մշտական)» բառը փոխարինել «տասը տարի ժամկետով» բառերով,

բ)«բացառապես ծառատունկ իրականացնելու նպատակով» բառերը փոխարինել «ծառատունկի, կեսաբազմազանության պահպանության, որսագողության կանխարգելման և բնապահպանական այլ ծրագրեր իրականացնելու նպատակով» բառերով,

գ)կատարել լրացում 3-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«3.Պայմանագիրը կնքելուց հետո՝ երկու տարվա ընթացքում իրականացնել 15-20 միլիոն ՀՀ դրամի ներդրում:»:

Կողմ -0 Դեմ -11 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ
ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ
ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ
ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ
ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ
ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ
ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 115 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2,00526 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված հողատեսքերն աճուրդով օտարելու մասին (մեկ լոտ).

1)կադաստրային ծածկագիր 10-035-0268-0013, մակերեսը՝ 2.00526հա, որից 1,58915հա վարելահող և 0,41611 հա այլ հողատեսք:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 706 (յոթ հարյուր վեց) տոկոսը (3 870 000 (երեք միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ):

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԶՈՅԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Եղեգիս համայնք
ՀՀ Վայոց ձորի մարզ , հեռ.՝ 99-2-82, կայք՝ yeghegis.am,էլ. հասցե՝ yeghegis.vayotsdzor@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28-ը նոյեմբերի 2025 թվականի N 116 Ա

ԵՂԵԳԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԱՏԻՆ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 2,14849 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐՆ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N 286 որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի գ) ենթակետով, 22-րդ կետի պահանջներով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

1.Տալ համաձայնություն Եղեգիս համայնքի Շատին գյուղի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության ստորև ներկայացված հողատեսքերն աճուրդով օտարելու մասին (մեկ լոտ).

1)կադաստրային ծածկագիր 10-035-0268-0015, մակերեսը՝ 2,14849հա, որից 1,16191հա վարելահող և 0,98658 հա այլ հողատեսք:

2.Մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքի 808 (ութ հարյուր ութ) տոկոսը (3 610 000 (երեք միլիոն վեց հարյուր տաս հազար) ՀՀ դրամ):

3. Տալ հայտարարություն Առավոտ օրաթերթում:

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՆԱՐԵԿ

ԳԱԲՐԻԵԼՅԱՆ ԱՀԱՐՈՆ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ՋՈՅԱ

ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՏՈՒՇ

ՊՈՂՈՍՅԱՆ ՀՐԱՉՅԱ

ՍԱՐԳՍՅԱՆ ՏԻԳՐԱՆ

ՆԱՋԱՐՅԱՆ ԱՐԳԻՇՏԻ

ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՍՄԲԱՏՅԱՆ ՄԱՄԻԿՈՆ

ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ

ԲԱԲԱՅԱՆ ՎԱՀԵ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ